ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015-06.03/128
06.03.2015 թ.

ՀՀ վարչական դատարան

Հայցվոր՝
«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» ՀԿ նախագահ
Պետական ռեգիստրի վկայական 03Ա070486
ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, 2001
Տիգրան Մեծի 59

Ներկայացուցիչ՝
Արայիկ Միքայելի Զալյան
Բնակվող՝ ք. Վանաձոր, Ուսանողական 5/18
Ծանուցման հասցե՝ Տիգրան Մեծի 59,
ք. Վանաձոր, 2001, Հայաստան

Պատասխանող՝
ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն
Ք. Երևան, Նալբանդյան 104

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ

(տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին)

1. Գործով փաստական հանգամանքները.

1.1. 2015թ. հունվարի 26-ին «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ (այսուհետ՝ իրավապաշտպան կազմակերպություն) նախագահ Արթուր Սաքունցը տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գ. Հակոբյանին հետևյալ բովանդակությամբ.

ՀՀ կառավարությունը 2014 թվականի փետրվարի 27-ին թիվ 303-Ն որոշմամբ հաստատել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝Ծրագիր):

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կարևորում է Ծրագրով սահմանված միջոցառումների պատշաճ և արդյունավետ իրականացումը:

Ծրագրով սահմանված մի շարք գործողություններում ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հանդիսանում է պատասխանատու մարմին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրել է տրամադրել տեղեկատվություն այն, մասին թե՝

1.1.1.Անցկացվել է արդյո՞ք խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման չափանիշների միջև առկա սահմանազատման միջազգայնորեն ընդունված չափանիշների վերաբերյալ վերապատրաստում՝ հաշվի առնելով Յոհաննեսբուրգյան սկզբունքներն ազգային անվտանգության, արտահայտման ազատության և տեղեկատվության մատչելիության վերաբերյալ,

1.1.2.ե՞րբ և քանի՞ դասընթաց է կազմակերպվել և իրականացվել,

1.1.3.Ազգային անվտանգության ծառայության ո՞ր ստորաբաժանումների ծառայողներն են վերապատրաստվել, ընդհանուր առմամբ քանի՞ ունկընդիր է մասնակցել վերապատրաստումներին:

1.1.4.Կազմակերպվել են արդյո՞ք ՀՀ ազգային անվտանգության ծառայողների համար շարունակական վերապատրաստումներ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի և համապատասխան կանոնակարգերի դրույթների պրակտիկ կիրառման վերաբերյալ,

1.1.5. ե՞րբ և քանի՞ դասընթաց է կազմակերպվել և իրականացվել,

1.1.6. ՀՀ ազգային անվտանգության ծառայության ո՞ր մարմինների ծառայողներն են մասնակցել վերապատրաաստումներին, ընդհանուր առմամբ քանի՞ ունկընդիր է մասնակցել վերապատրաստումներին:

1.1.7. Ուսումնասիրվել է արդյո՞ք հարցաքննությունների տեսաձայնագրման առկա միջազգային փորձը և ներկայացվել է արդյո՞ք առաջարկություն տեսաձայնագրման համակարգը ՀՀ-ում ներդնելու նպատակահարմարության վերաբերյալ, եթե այո, խնդրում եմ տրամադրել առաջարկության օրինակը:

1.1.8. Ե՞րբ և քանի՞ դասընթաց է կազմակերպվել և իրականացվել խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ ՀՀ ազգային անվտանգության ծառայության ծառայողների շրջանում:

1.1.9. ՀՀ ազգային անվտանգության ծառայության ո՞ր մարմինների ծառայողներն են վերապատրաստվել: Ընդհանուր առմամբ քանի՞ ծառայող է անցել վերապատրաստումներ, ինչպե՞ս է իրականացվել դասընթացների ազդեցության գնահատումը:

1.1.10. Ստեղծվել են արդյո՞ք անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար նախատեսված հատուկ սենյակներ,

եթե, այո, ապա քանի՞ սենյակ է ստեղծվել ազգային անվտանգության ծառայության ո՞ր ստորաբաժանումներում են դրանք ստեղծվել[1]:

1. Ընդգծված՝ (1.1.2, 1.1.3, 1.1.5, 1.1.6, 1.1.7, 1.1.8, 1.1.9, 1.1.10-րդ) կետերը այն կետերն են, որոնց վերաբերյալ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից տեղեկատվության տրամադրումը մերժվել է

1.2. 2015թ. փետրվարի 6-ին[2] ՀՀ ազգային անվտանգության վարչության պետ Ա. Ավետիսյանից ստացվել է թիվ 11/101 պատասխան գրությունը,ըստ որի մասնակի մերժվել է տեղեկատվության տրամադրումը հետևյալ պատճառաբանությամբ,

1.Խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման չափանիշների միջև առկա սահմանազատման միջազգայնորեն ընդունված չափանիշների (հաշվի առնելով Յոհանեսբուրգյան ազգային անվտանգության, արտահայտման ազատության և տեղեկատվության մատչելիության սկզբունքները), «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի և համապատասխան կանոնակարգերի դրույթների պրակտիկ կիրառման, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում պարբերաբար կազմակերպվել և իրականացել են վերապատրաստման դասընթացներ ՀՀ ԱԱԾ ծառայողների համար:

2. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունն իր իրավասությունների սահմաններում ուսումնասիրել է հարցաքննությունների տեսաձայնագրման առկա միջազգային փորձը և տեսաձայնագրման համակարգի ներդրման առարկություն չունենալու մասին դիրքորոշում ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն:

3. Ձեր հարցմանը վերաբերվող մնացած տեղեկատվությունը պարունակում է ծառայողական գաղտնիք և համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Ձեզ տրամադրվել չի կարող:

2. Հայցի իրավական հիմքերը.

2.1. Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն վարչական մարմինը, որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, այնուհանդերձ ներկայացնում եմ հետևյալ հիմնավորումները:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

---

2. Տես՝ կից ներկայացվող 7-րդ փաստաթուղթը

ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ և եվրոպական կոնվենցիայով երաշխավորված վերը նշված իրավունքների իրականացումն ապահովվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, որի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը /կամ/ դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգրով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկատվությունը»:

Նշված իրավանորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ ոստիկանության կողմից պահանջվող տեղեկատվության չտրամադրումը հանգեցնում է ՀՀ Սահմանադրության, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կողմից վավերացրած Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտմանը:

2.2. Տեղեկատվության տրամադրումը ոչ իրավաչափ մերժելու մասին պնդումներ

Պատասխանողն իր մերժումը հիմնավորել է հետևյալ կերպ. «...Ձեր հարցմանը վերաբերվող մնացած տեղեկատվությունը պարունակում է ծառայողական գաղտնիք և համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի Ձեզ տրամադրվել չի կարող:

Այսպես, կարելի է փաստել, որ Պատասխանողը Իրավապաշտպան կազմակերպության դիմումը մերժել է բացառապես այն պատճառաբանությամբ, որ պահանջվող տեղեկությունը, ըստ պատասխանողի, պարունակում է ծառայողական գաղտնիք:

Փաստ է, որ Իրավապաշտպան կազմակերպության կողմից պահանջված նյութերը բովանդակային առումով բավարարում են Տեղեկատվության ազատության մասին օրենքի 3-րդ հոդվածով սահմանված, տեղեկություններ հասկացության պահանջին, ուստի և համարվում են տեղեկություն, իսկ քանի որ այդ տեղեկությունը տիրապետում է պատասխանողը, հետևապես նա էլ նույն օրենքի ուժով հանդիսանում է տեղեկության տնօրինողը և ըստ այդմ՝ տեղեկատվության տնօրինողին առաջադրված պարտավորությունների կրողն է:

ՀՀ տեղեկատվության ազատության մասին օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում Տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և <u>իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն</u>.

Իրավապաշտպան կազմակերպությունը պատասխանողից պահանջել էր տրամադրել ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 27-ին թիվ 303-Ն որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունները, որը իր բնույթով և գործողություններով չի կարող դիտվել որպես ծառայողական գաղտնիք:

ՀՀ պետական և ծառայողական գաղտնիքի մասին օրենքի 2-րդ մասի համաձայն՝ «Ծառայողական գաղտնիքը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել ՀՀ անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը»:

Իրավապաշտպան կազմակերպության կողմից պահանջված տեղեկատվությունը վերաբերվել է՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայողների համար կազմակերպված՝ վերապատրաստումների թվին, մասնակիցների թվին և ստորաբաժանումներին, անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար նախատեսված հատուկ սենյակների առկայությանը, հարցաքննությունների տեսաձայնագրման տեսաձայնագրման համակարգ ներդնելու նպատակահարմարության վերաբերյալ, առաջարկության ներկայացրած լինելու պարագայում տվյալ առաջարկության պատճենի տրամադրմանը[3]:

Սույն գործով պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է ընդամենը կազմակերպչական և ընթացակարգային հարցերին, որոնց հրապարակայնությունը ՀՀ անվտանգությանը չի կարող վնաս հասցնել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով, և 72-րդ հոդվածներով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

պարտավորեցնել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը տրամադրել 26.01.2015թ. Ե2015-26,01/77 հարցմամբ հայցվող տեղեկությունը:

Կից ներկայացվում է.
1.պետական տուրքի անդորրագիր

3. Տես սույն հայցադիմումի՝ 1.1.1-ից 1.1.10-րդ կետերը:

2.հայցադիմումը ¨ դրան կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին ¨ ՀՀ ֆինանսների
նախարարություն ուղարկելու փաստը հավաստող փոստային անդորրագրերը
3.կազմակերպության պետական ռեգիստրի վկայականի պատճենը
4.կազմակերպության կանոնադրության պատճենը
5.26.02.2015թ. կազմակերպության ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին ուղղված գրության պատճենը
6. 05.02.2015թ. ՀՀ ազգային անվտանգության ծառայության պատասխան գրության պատճենը
7. 05.02.2015թ. գրությունը կազմակերպության կողմից 06.02.2015թ. ստանալը հավաստող փոստային ծրարի պատճենը
8. կազմակերպության կողմից Արայիկ Զալյանին տրված լիազորագրի պատճեն,
9. Արայիկ Զալյանի անձնագրի պատճենը:

Կազմակերպության ներկայացուցիչ՝ Ա. Զալյան